«ՌՈՒՍԱԼ ԱՐՄԵՆԱԼ» ՓԲԸ

ֆինանսական հաշվետվություններ

2021 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար
Անկախ աուդիտորական եզրակացության հետ միասին

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն

ֆինանսական հաշվետվություններ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 1
Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն 2
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 3
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն 4

ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Հաշվետու կազմակերպություն 5
2. Հաշվապահական հաշվառման հիմունքներ 6
3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն 7
4. Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ 16
5. Հասույթ 18
6. Վաճառքի ինքնարժեք 19
7. Իրացման ծախսեր 19
8. Վարչական ծախսեր 20
9. Զուտ ֆինանսական եկամուտ/(ծախսեր) 20
10. Շահութահարկի գծով ծախս 20
11. Հիմնական միջոցներ 22
12. Պաշարներ 23
13. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր 23
14. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ 23
15. Կապիտալ և պահուստներ 23
16. Կապիտալի կառավարում 24
17. Վարկեր և փոխառություններ 24
18. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր 25
19. Իրական արժեք և ռիսկերի կառավարում 25
20. Պայմանական դեպքեր 29
21. Հանձնառություններ 30
22. Գործարքներ կապակցված կողմերի հետ 30
23. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած դեպքեր 31

Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

Ernst & Young CJSC
1 Northern Ave., office 27
Yerevan, 0001, Armenia
Tel: +374 (10) 500 790
+374 (10) 500 705
www.ey.com/am

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան 0001
Հյուսիսային պող. 1, գրասենյակ 27
Հեռ. +374 (10) 500 790
+374 (10) 500 705

Անկախ աուդիտորական եզրակացություն

«ՌուսԱլ ԱրմենԱլ» փակ բաժնետիրական ընկերության
Բաժնետերերին և Խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ՌուսԱլ ԱրմենԱլ» (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համար ֆինանսական արդյունքների, համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀԷՄՍԽ) կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները) (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք

Ընկերության 2020թ. դեկտեմբերի 31-ի ֆինանսական հաշվետվությունները աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, ով 2021 թվականի մայիսի 31-ին արտահայտել է չձևափոխված կարծիք այդ հաշվետվությունների վերաբերյալ:

Ղեկավարության և Խորհրդի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Ընկերության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Խորհուրդը պատասխանատու է Ընկերության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ վերցրած, զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,

- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդ բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա իրադարձություններն ու հանգամանքները կարող են հանգեցնել Ընկերության գործունեության անընդհատության դադարեցմանը,
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը,

Խորհրդին, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան

Աուդիտի բաժնի գործընկեր Քսենյա Բագինյան

Գլխավոր տնօրեն Էրիկ Հայրապետյան

03 հունիսի, 2022թ.

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

հազ. դրամ	*Ծան.*	*31 դեկտեմբերի 2021թ.*	*31 դեկտեմբերի 2020թ.*
Ակտիվներ			
Հիմնական միջոցներ	11	29,106,886	27,436,953
Կանխավճարներ շահութահարկի գծով		505,533	1,313,722
Կանխավճարներ մատակարարներին		391,103	84,209
Ոչ ընթացիկ ակտիվներ		**30,003,522**	**28,834,884**
Պաշարներ	12	18,754,950	17,140,886
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	13	6,987,806	5,902,183
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	14	19,584	63,822
Ընթացիկ ակտիվներ		**25,762,340**	**23,106,891**
Ընդամենը ակտիվներ		**55,765,862**	**51,941,775**
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ	15	36,699,295	36,699,295
Լրացուցիչ կապիտալ		28,683,833	28,683,833
Կուտակված վնաս		(52,477,350)	(57,324,931)
Ընդամենը սեփական կապիտալ		**12,905,778**	**8,058,197**
Պարտավորություններ			
Հետաձգված հարկային պարտավորություններ	10	3,320,233	3,222,644
Ոչ ընթացիկ պարտավորություններ		**3,320,233**	**3,222,644**
Վարկեր և փոխառություններ	17	15,311,076	17,523,712
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	18	24,228,775	23,137,222
Ընթացիկ պարտավորություններ		**39,539,851**	**40,660,934**
Ընդամենը պարտավորություններ		**42,860,084**	**43,883,578**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		**55,765,862**	**51,941,775**

Սույն ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Տնօրենների խորհրդի կողմից 2022թ. մայիսի 27-ին և ստորագրվել վերջինիս անունից՝

Ա. Զաքարյան
Գլխավոր տնօրեն

Վ. Սուվալյան
Ֆինանսական տնօրեն

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն 2021 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

հազ. դրամ	*Ծան.*	*2021թ.*	*2020թ.*
Հասույթ	5	59,252,319	46,605,310
Վաճառքի ինքնարժեք	6	(52,006,504)	(43,541,800)
Համախառն շահույթ		**7,245,815**	**3,063,510**
Իրացման ծախսեր	7	(545,928)	(406,738)
Վարչական ծախսեր	8	(1,806,468)	(1,651,577)
Զուտ այլ ծախսեր		(373,996)	(180,463)
Գործառնական գործունեության արդյունք		**4,519,423**	**824,732**
Ֆինանսական եկամուտ		1,233,938	11
ֆինանսական ծախսեր		(2)	(2,139,437)
Զուտ ֆինանսական եկամուտ/(ծախս)	9	**1,233,936**	**(2,139,426)**
Օգուտ/(վնաս) նախքան շահութահարկով հարկումը		**5,753,359**	**(1,314,694)**
Շահութահարկի գծով (ծախս)/օգուտ	10	(905,778)	52,081
Զուտ օգուտ/(ծախս) տարվա համար		**4,847,581**	**(1,262,613)**

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
2021 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

հազ. դրամ	*Բաժնետիրական կապիտալ*	*Լրացուցիչ կապիտալ*	*Կուտակված վնաս*	*Ընդամենը*
Մնացորդը առ 1 հունվարի 2020թ.				
Ընդամենը համապարփակ վնաս	**36,699,295**	**28,683,833**	**(56,062,318)**	**9,320,810**
Ընդամենը համապարփակ վնաս տարվա համար	–	–	(1,262,613)	**(1,262,613)**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	**36,699,295**	**28,683,833**	**(57,324,931)**	**8,058,197**
Մնացորդը առ 1 հունվարի 2021թ.				
Ընդամենը համապարփակ օգուտ	**36,699,295**	**28,683,833**	**(57,324,931)**	**8,058,197**
Ընդամենը համապարփակ օգուտ տարվա համար	–	–	4,847,581	**4,847,581**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	**36,699,295**	**28,683,833**	**(52,477,350)**	**12,905,778**

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
2021 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

հազ. դրամ	*Ծան.*	*2021թ.*	*2020թ.*
Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից			
Վաճառքից ստացված գումարներ		57,062,356	46,547,127
Մատակարարներին վճարված գումարներ		(53,673,490)	(41,365,465)
Աշխատակիցներին վճարված գումարներ		(2,880,954)	(2,802,976)
Ստացված ԱԱՀ և ակցիզային հարկ		1,917,344	1,586,645
Վճարված ԱԱՀ և ակցիզային հարկ		(630,188)	(653,237)
Վճարված հարկեր՝ բացառությամբ շահութահարկի		(1,122,879)	(1,001,199)
Այլ վճարումներ		(11,922)	(9,026)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ		**660,267**	**2,301,869**
Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից			
Մուտքեր հիմնական միջոցների վաճառքից		59,000	65,350
Հիմնական միջոցների ձեռքբերում		(755,819)	(2,538,188)
Հիմնական միջոցների ձեռքբերման համար տրված կանխավճարների աճ		–	(1,631)
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական հոսքեր		**(696,819)**	**(2,474,469)**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ նվազում		**(36,552)**	**(172,600)**
Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 1 հունվարի		63,822	214,274
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքները դրամական միջոցների և դրանց համարժեքների համար		(7,686)	22,148
Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 31 դեկտեմբերի	14	**19,584**	**63,822**

1. Հաշվետու կազմակերպություն

(ա) Կազմակերպչական կառուցվածքը և հիմնական գործունեությունը

«ՌուսԱլ ԱրմենԱլ» ՓԲԸ-ն («Ընկերություն») փակ բաժնետիրական ընկերություն է, որը հիմնադրվել է 2000թ. դեկտեմբերին՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության թիվ 268 որոշման (17 մայիսի 2000թ.) և ՀՀ կառավարության (ի դեմս «Կանաչ» ՓԲԸ) ու «Յունայթիդ Քամփընի Սիբիրսկիյ Ալյումինիյ» բաց բաժնետիրական ընկերության միջև կնքված հիմնադրման պայմանագրի (21 հունիսի 2000թ.):

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0051, Գրիբոեդովի փող. 25:

Ընկերության հիմնական գործունեությունն ալյումինե փայլաթիթեղի արտադրությունն ու իրացումն է:

Ընկերության անմիջական մայր կազմակերպությունն է Զերսիում գրանցված «ՌՈՒՍԱԼ ԼԻՄԻԹԻԴ» ընկերությունը:

«Ընկերությունը ֆինանսավորման մեծ մասը ստանում է «ՌՈՒՍԱԼ» խմբի ընկերություններից («Բաժնետերերի խումբ»), որոնց հետ է կապված նաև Ընկերության պարտքային ռիսկը: Արդյունքում, Ընկերությունը տնտեսական կախման մեջ է գտնվում Բաժնետերերի խմբից: Բացի այդ, Ընկերության գործունեությունը սերտորեն կապված է Բաժնետերերի խմբի պահանջների հետ, և Բաժնետերերի խմբին կատարվող վաճառքների գները որոշվում են Բաժնետերերի խմբի այլ ընկերությունների հետ համատեղ:

Կապակցված կողմերի հետ գործարքների մանրամասները ներկայացված են Ծանոթագրություն 22-ում:

2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության վերջնական վերահսկող անձն է պրն. Օլեգ Դերիպասկան: Այս ֆինանսական հաշվետվությունների ստորագրման ամսաթվի դրությամբ Ընկերությանը հասանելի տեղեկատվության համաձայն չկա որևէ անհատ, որն ունի 25%-ը գերազանցող անուղղակի գերակշռող մասնակցություն Ընկերության կապիտալում, կամ հնարավորություն ունի վերահսկել Ընկերության գործունեությունը:

(բ) Հայաստանի գործարար միջավայրը

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Ընկերության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական և ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար: Բացի այդ, Լեռնային Ղարաբաղում 2020թ. սեպտեմբերին վերսկսված զինված հակամարտությունը, որին հաջորդեց հրադադարի մասին համաձայնագիրը Լեռնային Ղարաբաղի վիճելի տարածքների շուրջ, և COVID-19 համավարակն էլ ավելի են մեծացրել գործարար միջավայրում գործունեություն իրականացնելու պայմանների հետ կապված անորոշությունը:

Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

Ղեկավարության գնահատմամբ COVID-19 նշանակալի ազդեցություն չի ունեցել Ընկերության գործունեության վրա:

(գ) Օտարերկրյա ակտիվների վերահսկողության վարչության պատժամիջոցներ

2018թ. ապրիլի 6-ին Ամերիկայի Միացյալ Նահանգների ֆինանսների նախարարության Օտարերկրյա ակտիվների վերահսկողության վարչությունը (ՕԱՎՎ) որոշակի իրավաբանական և ֆիզիկական անձանց ներառել էր իր Հատուկ կատեգորիայի անձանց և արգելված անձանց ցուցակում (ՕԱՎՎ պատժամիջոցներ): Նշված անձանց շարքում էր «ՌուսԱլ ԱրմենԱլ» ՓԲԸ-ի միջանկյալ մայր կազմակերպություն հանդիսացող «Ռուսալ» ՍՊԸ միավորված ընկերությունը:

Արդյունքում, ԱՄՆ-ում գտնվող կամ ԱՄՆ-ի քաղաքացիներին պատկանող «Ռուսալ» ՍՊԸ միավորված ընկերության և վերջինիս դուստր կազմակերպությունների ամբողջ գույքը կամ մասնակցությունները գույքում արգելափակվել էին, սառեցվել էին, չէին կարող փոխանցվել, օգտագործվել որպես վճարման միջոց, արտահանվել, օտարվել կամ որևէ այլ կերպ օգտագործվել: Ցուցակում ներառվելուց հետո թողարկվեցին մի քանի գլխավոր լիցենզիաներ, որոնք հետագայում թույլատրեցին որոշ գործարքների իրականացումը «Ռուսալ» ՍՊԸ միավորված ընկերության, վերջինիս հիմնական բաժնետեր՝ «En+ Գրուպ» ՍՊԸ-ի («En+»), նրանց պարտավորությունների և սեփական կապիտալի հետ:

1. Հաշվետու կազմակերպություն (շարունակելի)

(գ) Օտարերկրյա ակտիվների վերահսկողության վարչության պատժամիջոցներ (շարունակելի)

2019թ. հունվարի 27-ին ՕԱՎՎ-ն հայտարարեց «Ռուսալ» ՍՊԸ միավորված ընկերությանը և «En+»-ին ՕԱՎՎ-ի Հատուկ կատեգորիայի անձանց և արգելված անձանց ցուցակից հանելու իր որոշման մասին, որն անմիջապես մտավ ուժի մեջ: Նշված ընկերությունները ցուցակից հանելու համար մի շարք պայմաններ պետք է բավարարվեն, որոնք ներառում են, սակայն չեն սահմանափակվում հետևյալով. պետք է կատարվեն փոփոխություններ կորպորատիվ ղեկավար կազմում, որոնք, ի թիվ այլոց, նախատեսում են Խորհդի կազմի փոփոխությունը, որի նպատակն է ապահովել անկախ տնօրենների գերակայությունը Խորհրդի կազմում, և Խորհրդի նախագահի փոփոխությունը: «Ռուսալ» ՍՊԸ միավորված ընկերությունը պետք է կանոնավոր հիմունքով հաշվետվություններ ներկայացնի ՕԱՎՎ-ին, որոնք կհաստատեն ցուցակից հանելու պայմանների հետ ընկերության համապատասխանությունը:

2. Հաշվապահական հաշվառման հիմունքներ

(ա) Համապատասխանության հավաստում

Այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) պահանջների համաձայն:

(բ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («դրամ»), որը Ընկերության ֆունկցիոնալ արժույթն է և այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական ամբողջ տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

(գ) Չափման հիմունքներ

Այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով:

Այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատ գործելու հիմունքով:

(դ) Գնահատումների և դատողությունների օգտագործում

Ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունից պահանջվում է կատարել դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամուտների և ծախսերի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և հիմքում ընկած ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական հաշվառման գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են, և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

(ե) Իրական արժեքի չափում

Ընկերության հաշվապահական հաշվառման մի շարք դրույթներ և բացահատումներ պահանջում են ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափում:

Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելիս Ընկերությունը հնարավորության սահմաններում օգտագործում է դիտելի շուկայական տվյալները:

Իրական արժեքները դասակարգվում են ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակների՝ հիմք ընդունելով գնհատման մեթոդներում օգտագործված ելակետային տվյալները, ինչպես ներկայացված է ստորև.

- 1-ին մակարդակ. նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար գործող շուկայում գնանշված գները (չճշգրտվող):
- 2-ին մակարդակ. 1-ին մակարդակում ներառված գնանշված գներից տարբեր ելակետային տվյալները, որոնք ակտիվի կամ պարտավորության համար դիտելի են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գներից ստացվող):
- 3-ին մակարդակ. ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտելի շուկայական տվյալների վրա (ոչ դիտելի ելակետային տվյալներ):

2. Հաշվապահական հաշվառման հիմունքներ (շարունակելի)

(ե) Իրական արժեքի չափում (շարունակելի)

Եթե ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելու համար օգտագործված ելակետային տվյալները կարող են դասակարգվել իրական արժեքի հիերարխիայի տարբեր մակարդակներում, ապա իրական արժեքի չափումն որպես մեկ ամբողջություն դասակարգվում է իրական արժեքի հիերարխիայի այն նույն մակարդակում, որտեղ դասակարգվում են ամենացածր մակարդակի տվյալները, որոնք նշանակալի են ամբողջ չափման համար:

Իրական արժեքի հիերարխիայի մակարդակների միջև տեղափոխումներն Ընկերությունը ճանաչում է այն հաշվետու ժամանակաշրջանի վերջում, որի ընթացքում տեղի է ունեցել փոփոխությունը:

Իրական արժեքի չափման ժամանակ կատարվող ենթադրությունների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 19-ում՝ «Իրական արժեք և ռիսկերի կառավարում»:

(զ) Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի փոփոխություններ

Մի շարք ստանդարտներում արված փոփոխությունները ուժի մեջ են մտել 2021թ. հունվարի 1-ից, սակայն դրանք էական ազդեցություն չունեն Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն այս ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

(ա) Հասույթ

Ընկերությունը սկսել է կիրառել ՖՀՄՍ 15-ը 2018թ. հունվարի 1-ից: Հաճախորդների հետ պայմանագրերին վերաբերող Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության մասին տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 5-ի (գ) կետում:

(բ) Ֆինանսական եկամուտ և ծախսեր

Ընկերության ֆինանսական եկամուտը և ֆինանսական ծախսերը ներառում են.

- տոկոսային եկամուտը,
- տոկոսային ծախսը,
- ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հետ կապված փոխարժեքային տարբերություններից առաջացող օգուտը կամ վնասը:

Տոկոսային եկամուտը կամ ծախսը ճանաչվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի համար գնահատված ապագա դրամական վճարումները կամ մուտքերը զեղչում է ճիշտ մինչև՝

- ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեք կամ
- ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեք:

Տոկոսային եկամուտը կամ ծախսը հաշվարկելիս արդյունավետ տոկոսադրույքը կիրառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի (եթե ակտիվը պարտքային առումով արժեզրկված չէ) կամ պարտավորության ամորտիզացված արժեքի նկատմամբ: Սկզբնական ճանաչումից հետո պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Եթե ակտիվը դադարում է պարտքային առումով արժեզրկված լինելուց, հաշվարկը կրկին իրականացվում է համախառն հիմունքով:

Փոխարժեքային տարբերություններից առաջացող օգուտը և վնասը ներկայացվում են զուտ հիմունքով որպես ֆինանսական եկամուտ կամ ֆինանսական ծախս՝ կախված այն հանգամանքից, թե որ դիրքում են կատարվում արտարժույթի փոփոխությունները՝ զուտ շահույթի, թե՝ զուտ վնասի:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն (շարունակելի)

(գ) Արտարժույթով գործառնություններ

Արտարժույթով գործառնությունները վերահաշվարկվում են դրամի գործառնության ամսաթվի փոխարժեքով:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա փոխարժեքով: Դրամային հոդվածների հետ կապված արտարժույթով գործառնությունների գծով օգուտը կամ վնասն իրենից ներկայացնում է տարբերություն ժամանակաշրջանի սկզբի դրությամբ ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, ժամանակաշրջանի համար արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսների ու վճարումների մասով ճշգրտված ամորտիզացված արժեքի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով վերահաշվարկված ֆունկցիոնալ արժույթով արտահայտված ամորտիզացված արժեքի միջև:

Սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործառնության ամսաթվի փոխարժեքով:

Արտարժույթի վերափոխարկումից առաջացող տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

(դ) Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով պարտականությունները չափվում են առանց զեղչման և ծախսագրվում են համապատասխան ծառայությունը մատուցելիս: Պարտավորությունը ճանաչվում է այն գումարի չափով, որն ակնկալվում է վճարել որպես կարճաժամկետ դրամական միջոցների տեսքով պարգևավճար, եթե Ընկերությունն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն այդ գումարը վճարել որպես աշխատակցի անցյալ ծառայության արդյունք և կարող է արժանահավատորեն գնահատել պարտականությունը:

(ե) Հարկում

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ուղղակիորեն սեփական կապիտալում կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված հոդվածներին:

(i) Ընթացիկ հարկ

Ընթացիկ հարկը հարկի այն գումարն է, որն ակնկալվում է վճարել կամ ստանալ տարվա հարկվող եկամտի կամ վնասի գծով՝ կիրառելով հարկի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և ներառում է նախորդ տարիների համար վճարման ենթակա հարկի գծով ճշգրտումները:

(ii) Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը ճանաչվում է ֆինանսական հաշվետվություններում արտացոլվելու նպատակով որոշվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկ չի ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչման ժամանակ բիզնեսի միավորում չհանդիսացող գործարքի արդյունքում, որն ազդեցություն չունի ո՞չ հաշվապահական և ո՞չ հարկվող շահույթի կամ վնասի վրա:

Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են չօգտագործված հարկային վնասների, չօգտագործված հարկային զեղչերի և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով այն չափով, որով հավանական է, որ Ընկերությունն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել:

Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այն չափով, որով այլևս հավանական չէ, որ համապատասխան հարկային օգուտը կիրացվի. նվազեցումները հակադարձվում են ապագայում հարկվող շահույթի հավանականության բարելավման դեպքում:

Հետաձգված հարկը չափվում է օգտագործելով հարկի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե Ընկերությունը տվյալ պահին ունի ընթացիկ հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցելու իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք և հետաձգված հարկային ակտիվներն ու հետաձգված հարկային պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկատուից կամ տարբեր հարկատուներից, որոնք մտադիր են կամ մարել ընթացիկ հարկային պարտավորությունները և ակտիվները զուտ հիմունքով, կամ միաժամանակ իրացնել հարկային ակտիվները և մարել հարկային պարտավորությունները:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն (շարունակելի)

(զ) Պաշարներ

Պաշարները չափվում են սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Պաշարների սկզբնական արժեքը հաշվարկվում է կշռված միջին արժեքի սկզբունքով և ներառում է պաշարների ձեռք բերման ծախսումները, արտադրական կամ փոխարկման ծախսումները և դրանք ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսումներ: Արտադրված պաշարների և անավարտ արտադրանքի դեպքում, սկզբնական արժեքը ներառում է արտադրական վերադիր ծախսումների համապատասխան մասը՝ հիմք ընդունելով արտադրական նորմատիվային հզորությունը:

Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար գնահատված ծախսումները:

(է) Հիմնական միջոցներ

(i) Ճանաչում և չափում

Հիմնական միջոցների միավորները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և կուտակված արժեզրկումից կորուստները:

Սկզբնական արժեքը ներառում է ակտիվի ձեռք բերմանն ուղղակիորեն վերագրելի ծախսումները: Սեփական ուժերով կառուցված ակտիվների սկզբնական արժեքը ներառում է նյութերի արժեքը, ուղղակի աշխատուժի գծով ծախսումները, ակտիվն իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ցանկացած այլ ծախսումները, ակտիվի ապատեղակայման և քանդման ծախսումները, տեղանքի վերականգնման ծախսումները և կապիտալացված փոխառության ծախսումները: Ձեռքբերված համակարգչային ծրագիրը, որը հանդիսանում է համապատասխան սարքավորման ֆունկցիոնալության անբաժանելի մասը, կապիտալացվում է որպես սարքավորման մաս:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ (հիմնական բաղկացուցիչներ):

Հիմնական միջոցի միավորի օտարումից ստացված շահույթը և վնասը որոշվում են համեմատելով օտարումից ստացված մուտքերը հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի հետ և ճանաչվում են զուտ հիմունքով «այլ եկամուտ/այլ ծախս» հոդվածում՝ շահույթում կամ վնասում:

(ii) Հետագա ծախսումներ

Հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն դեպքում, երբ հավանական է, որ Ընկերություն կհոսեն այդ ծախսումների հետ կապված ապագա տնտեսական օգուտները և որ դրանք կարելի է արժանահավատորեն չափել:

Հիմնական միջոցների ամենօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

(iii) Մաշվածություն

Հիմնական միջոցների միավորների մաշվածության հաշվարկը սկսվում է դրանց տեղադրման և շահագործման հանձնելու պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա՝ հանած վերջինիս գնահատված մնացորդային արժեքը:

Մաշվածությունը սովորաբար ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների միավորի յուրաքանչյուր մասի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այս մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը: Հողատարածքի գծով մաշվածություն չի հաշվարկվում:

Ստորև ներկայացված են հիմնական միջոցների հիմնական միավորների օգտակար ծառայության գնահատված ժամկետները ընթացիկ և համադրելի ժամանակաշրջանների համար:

շենքեր	50-70 տարի
մեքենա-սարքավորումներ	3-50 տարի
փոխադրամիջոցներ	7 տարի
տնտեսական միջոցներ	3-5 տարի

Մաշվածության հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն (շարունակելի)

(ը) Ֆինանսական գործիքներ

(i) Ճանաչում և սկզբնական չափում

Ֆինանսական ակտիվը (եթե այն առևտրային դեբիտորական պարտք չէ, որը չի պարունակում նշանակալի ֆինանսավորման բաղադրիչ) կամ ֆինանսական պարտավորությունը սկզբնապես չափվում է իրական արժեքով՝ գումարած, շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող հոդվածի դեպքում, գործարքի գծով այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը: Նշանակալի ֆինանսավորման բաղադրիչ չպարունակող առևտրային դեբիտորական պարտքը սկզբնապես չափվում է գործարքի գնով:

Առևտրային դեբիտորական պարտքերը և թողարկված պարտքային արժեթղթերը սկզբնապես ճանաչվում են սկզբնավորման ժամանակ: Մյուս բոլոր ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

(ii) Դասակարգում և հետագա չափում

Ֆինանսական ակտիվներ

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես ամորտիզացված արժեքով չափվող, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող՝ պարտքային ներդրումների համար, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող՝ բաժնային ներդրումների համար, կամ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող: Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվի դասակարգումը կախված է պայմանագրային դրամական հոսքերից և Ընկերության՝ ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելից: Որպեսզի ակտիվը դասակարգվի ամորտիզացված արժեքով կամ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող, հարկավոր է, որ այն առաջացնի դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ են: Այս գնահատումը կոչվում է SPPI գնահատում և իրականացվում գործիքի մակարդակով:

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն դեպքերի, երբ Ընկերությունը փոխում է ակտիվների կառավարման իր բիզնես մոդելը, որի դեպքում փոփոխության ազդեցությունը կրող բոլոր ֆինանսական ակտիվները վերադասակարգվում են բիզնես մոդելի փոփոխությանը հաջորդող առաջին հաշվետու ժամանակաշրջանի առաջին օրը:

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախորոշված չէ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է պահել ակտիվները պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու համար և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Պարտքային գործիքում ներդրումը չափվում է իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախորոշված չէ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն իրագործվում է թե՛ պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու և թե՛ ֆինանսական ակտիվները վաճառելու միջոցով և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Առևտրական նպատակով չպահվող բաժնային գործիքում ներդրման սկզբնական ճանաչման ժամանակ Ընկերությունը կարող է անշրջելի ընտրություն կատարել՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ներկայացնելու ներդրման իրական արժեքի հետագա փոփոխությունները: Այս ընտրությունը կատարվում է առանձին՝ յուրաքանչյուր ներդրման համար:

Բոլոր ֆինանսական ակտիվները, որոնք չեն դասակարգվում որպես ամորտիզացված արժեքով չափվող կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող, ինչպես ներկայացված է վերը, չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով: Սկզբնական ճանաչման պահին Ընկերությունը կարող է անշրջելիորեն նախորոշել ֆինանսական ակտիվը, որն այլապես բավարարում է ամորտիզացված արժեքով կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվելու պահանջները, որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, եթե դա կվերացնի կամ էականորեն կնվազեցնի հաշվառման անհամապատասխանությունը, որը հակառակ դեպքում կառաջանար:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն (շարունակելի)

(ը) Ֆինանսական գործիքներ (շարունակելի)

Ֆինանսական ակտիվներ. Բիզնես մոդելի գնահատում

Ընկերությունը պորտֆելի մակարդակով գնահատում է այն բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակում պահվում է ակտիվը, քանի որ այս գնահատումը լավագույնս արտացոլում է գործունեությունը կառավարելու և ղեկավարությանը տեղեկատվություն տրամադրելու եղանակը: Այդ դեպքում դիտարկվում է հետևյալ տեղեկատվությունը.

- պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը և նպատակները և այդ քաղաքականության աշխատանքը գործնականում: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարության նպատակն է ապահովել պամանագրով նախատեսված տոկոսային եկամտի ստացումը, ապահովել որոշակի տոկոսային եկամտաբերության մակարդակը, համապատասխանեցնել ֆինանսական ակտիվների ժամկետներն այն պարտավորությունների ժամկետներին, որոնք ֆինանսավորվում են այդ ակտիվներով, կամ դրամական միջոցների ակնկալվող արտահոսքին, կամ իրացնել դրամական հոսքերն ակտիվների վաճառքի միջոցով:
- բիզնես մոդելի (և այդ բիզնես մոդելում պահվող ֆինանսական ակտիվների) վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը:
- նախորդ ժամանակաշրջաններում ֆինանսական ակտիվների վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, այդ վաճառքների պատճառները և ապագա վաճառքների հետ կապված ակնկալիքները:

Ֆինանսական ակտիվների փոխանցումը երրորդ կողմերին այնպիսի գործարքներում, որոնք չեն բավարարում ապաճանաչման պայմանները, չի դիտարկվում որպես վաճառք այս նպատակի համար, և Ընկերությունը շարունակում է ճանաչել այդ ակտիվները:

Ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են առևտրական նպատակով կամ կառավարվում են և որոնց արդյունքը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով:

Ֆինանսական ակտիվներ. գնահատում, թե արդյոք պայմանագրային դրամական հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ

Այս գնահատման նպատակների համար «մայր գումարը» սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեք սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» բաղկացած է փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխատվության հետ առնչվող այլ հիմնական ռիսկերի և ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի) համար փոխհատուցումից, ինչպես նաև շահույթի մարժայից:

Գնահատելիս, թե արդյոք պայմանագրային դրամական հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ, Ընկերությունը դիտարկում է գործիքի պայմանագրային պայմանները: Այս դեպքում գնահատվում է, թե արդյոք ֆինանսական ակտիվը պարունակում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է այնպես փոխել պայմանագրային դրամական հոսքերի ժամկետները կամ գումարը, որ ֆինանսական ակտիվը չբավարարի այդ պայմանը: Այս գնահատումն իրականացնելիս Ընկերությունը դիտարկում է հետևյալը.

- պայմանական դեպքերը, որոնք կարող են փոխել դրամական հոսքերի գումարը կամ ժամկետները,
- վաղաժամ մարման և ժամկետի երկարաձգման պայմանները,
- պայմանները, որոնք սահմանափակում են Ընկերության պահանջը որոշակի ակտիվներից առաջացող դրամական հոսքերով (օրինակ՝ առանց ռեգրեսի իրավունքի ֆինանսական ակտիվ):

Վաղաժամ մարման պայմանը համապատասխանում է միայն մայր գումարի և տոկոսների վճարում հանդիսանալու չափանիշին, եթե վաղավճարման գումարն ըստ էության իրենից ներկայացնում է մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսների չվճարված գումարները, որոնք կարող են ներառել պայմանագրի վաղաժամ դադարեցման համար ողջամիտ փոխհատուցում:

Ֆինանսական ակտիվներ. Հետագա չափում, օգուտներ և կորուստներ

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ամորտիզացված արժեքը նվազեցվում է արժեզրկումից կորուստների չափով: Տոկոսային եկամուտը, փոխարժեքային տարբերություններից առաջացող օգուտը և վնասը և արժեզրկումը ճանաչվում են շահույթում կամ վնասում: Ապաճանաչումից առաջացող օգուտը կամ կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն (շարունակելի)

(ը) Ֆինանսական գործիքներ (շարունակելի)

Ֆինանսական պարտավորություններ. Դասակարգում, հետագա չափում, օգուտներ և կորուստներ

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես ամորտիզացված արժեքով չափվող և հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Տոկոսային ծախսը և փոխարժեքային տարբերություններից առաջացող օգուտը և վնասը ճանաչվում են շահույթում կամ վնասում: Ապաճանաչումից առաջացող ցանկացած օգուտը կամ կորուստը նույնպես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Այլ ֆինանսական պարտավորությունները ներառում էին վարկերը և փոխառությունները, բանկային օվերդրաֆտները, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը:

(iii) Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների փոփոխում

Ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոփոխվում են, Ընկերությունը գնահատում է, թե արդյոք փոփոխված ակտիվի դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Եթե դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են («նշանակալի փոփոխություն»), ապա սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է և ճանաչվում է նոր ֆինանսական ակտիվ՝ իրական արժեքով:

Ընկերությունն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում, այսինքն, գնահատում է, թե արդյոք սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերը նշանակալիորեն տարբերվում են փոփոխված կամ փոխարինված ֆինանսական ակտիվի դրամական հոսքերից: Ընկերությունը գնահատում է փոփոխության նշանակալի լինելը դիտարկելով քանակական և որակական գործոնները հետևյալ հերթականությամբ՝ որակական գործոններ, քանակական գործոններ, որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցություն: Եթե դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են, ապա սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս գնահատումն իրականացնելիս Ընկերությունը կիրառում է ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման համար օգտագործված ուղեցույցին նմանատիպ ուղեցույց:

Ընկերությունը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ֆինանսական ակտիվի արժույթի փոփոխություն,
- գրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների փոփոխություն,
- ֆինանսական ակտիվի պայմանների այնպիսի փոփոխություն, որը հանգեցնում է միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ հանդիսանալու չափանիշի հետ անհամապատասխանությանը (օրինակ՝ փոխարկման պայմանի ներառում):

Եթե ամորտիզացված արժեքով հաշվառվող փոփոխված ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր չեն, փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը: Այս դեպքում, Ընկերությունը վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը և համախառն հաշվեկշռային արժեքի ճշգրտումից առաջացող գումարը ճանաչում է որպես փոփոխությունից օգուտ կամ կորուստ՝ շահույթի կամ վնասի կազմում: Ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը վերահաշվարկվում է որպես վերաբանակցված կամ փոփոխված պայմանագրային դրամական հոսքերի ներկա արժեք, որոնք զեղչվում են ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով: Ցանկացած կրած ծախսում կամ վճար ճշգրտում է փոփոխված ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում է փոփոխված ֆինանսական ակտիվի մնացած ժամկետի ընթացքում:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ փոխվում են վերջինիս պայմանները և երբ փոփոխված պարտավորության դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Այս դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն՝ իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և փոփոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության արժեքի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Եթե փոփոխությունը (կամ փոխանակումը) չի հանգեցնում ֆինանսական պարտավորության ապաճանաչմանը, Ընկերությունը կիրառում է այն հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, համաձայն որի ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը ճշգրտվում է, երբ փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչման, այսինքն, Ընկերությունը ճանաչում է փոփոխության (կամ փոխանակման) արդյունքում առաջացող ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի ճշգրտումը շահույթում կամ վնասում փոփոխության (կամ փոխանակման) ամսաթվի դրությամբ:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն (շարունակելի)

(ը) Ֆինանսական գործիքներ (շարունակելի)

Գոյություն ունեցող ֆինանսական պարտավորությունների դրամական հոսքերի փոփոխությունները չեն դիտարկվում որպես փոփոխություն, եթե բխում են գոյություն ունեցող պայմանագրային պայմաններից, օրինակ՝ բանկերի կողմից ֆիքսված տոկոսադրույքների փոփոխությունները ՀՀ ԿԲ-ի հիմնական տոկոսադրույքի փոփոխությունների արդյունքում, եթե վարկային պայմանագրով բանկերն իրավունք ունեն կատարել նման փոփոխություն և Ընկերությունը հնարավորություն ունի կամ համաձայնվել վերանայված տոկոսադրույքի հետ, կամ մարել վարկն անվանական արժեքով՝ առանց տուգանքի: Տոկոսադրույքի փոփոխությունը մինչև ընթացիկ շուկայական տոկոսադրույքը Ընկերությունը հաշվառում է կիրառելով լողացող տոկոսադրույքով ֆինանսական գործիքների համար գործող ուղեցույցը: Սա նշանակում է, որ արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է առաջընթաց:

Ընկերությունն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում՝ դիտարկելով որակական գործոնները, քանակական գործոնները և որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցությունը: Ընկերությունը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ֆինանսական պարտավորության արժույթի փոփոխություն,
- գրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների փոփոխություն,
- փոխարկման հնարավորության ներառում,
- ֆինանսական պարտավորության ստորադասության փոփոխություն:

Քանակական գնահատման համար պայմանները նշանակալիորեն տարբեր են, եթե նոր պայմաններով դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքը, ներառյալ վճարված վճարները զուտ ստացված վճարներով և զեղչված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, նվազագույնը 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության մնացած դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքից: Եթե փոխանակումը կամ պայմանների փոփոխումը չի հաշվառվում որպես մարում, ապա ցանկացած կրած ծախսում կամ վճար ճշգրտում է պարտավորության հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում փոփոխված պարտավորության մնացած ժամկետի ընթացքում:

(iv) Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է դրամական հոսքեր ստանալու իրավունքներն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ որում Ընկերությունը ոչ փոխանցում, ոչ էլ պահպանում է սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները և չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ հսկողությունը:

Ընկերությունն իրականացնում է գործարքներ, որոնց շրջանակում փոխանցում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվների սեփականության հետ կապված կամ բոլոր, կամ, ըստ էության, բոլոր ռիսկերը և հատույցները: Նման դեպքերում փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունն այն դեպքում, երբ իր պայմանագրային պարտականությունները կատարվում են, կամ չեղյալ են համարվում, կամ ուժը կորցնում են: Ընկերությունը նաև ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ փոփոխվում են վերջինիս պայմանները և երբ փոփոխված պարտավորությունից առաջացող դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են, որի դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն՝ իրական արժեքով:

Ֆինանսական պարտավորության ապաճանաչման ժամանակ մարված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման (ներառյալ՝ փոխանցված ցանկացած ոչ դրամային ակտիվները կամ ստանձնած պարտավորությունները) միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

(v) Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են և ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում է զուտ գումարն այն և միայն այն դեպքում, երբ Ընկերությունը տվյալ պահին ունի գումարները հաշվանցելու իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք և մտադիր է կամ հաշվարկն իրականացնել զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն (շարունակելի)

(ը) Ֆինանսական գործիքներ (շարունակելի)

(vi) Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ միջոցները և բանկային հաշիվների մնացորդները: Դրամական հոսքերի մասին հաշվետվությունում դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են բանկային օվերդրաֆտները, որոնք ենթակա են մարման ըստ պահանջի և կազմում են դրամական միջոցների կառավարման անբաժանելի մասը:

(vii) Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ:

(թ) Արժեզրկում

(i) Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական գործիքներ

Ընկերությունը ճանաչում է կորստի պահուստ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից ակնկալվող պարտքային կորուստների գծով: Խմբային հիմունքով գնահատվող առևտրային դեբիտորական պարտքերի գծով կորստի պահուստը միշտ չափվում է ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարով:

Երբ Ընկերությունը որոշում է, թե արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր և երբ գնահատում է ակնկալվող պարտքային կորուստները, այն դիտարկում է ողջամիտ և հիմնավորված տեղեկատվությունը, որը տեղին է և հասանելի առանց անհարկի ծախսումների կամ ջանքերի: Գնահատումը ներառում է քանակական և որակական տվյալները, ինչպես նաև Ընկերության անցյալ ժամանակաշրջանների փորձի և պարտքի հիմնավորված գնահատման վրա հիմնված վերլուծությունը և ապագայամետ տեղեկատվությունը:

Ընկերությունը ենթադրում է, որ տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկի նշանակալի աճ, եթե այն ավելի քան 30 օր ժամկետանց է:

Ընկերությունը համարում է, որ ֆինանսական ակտիվի գծով տեղի է ունեցել պարտազանցում, եթե՝

- հավանական չէ, որ փոխառուն ամբողջությամբ կկատարի պարտքի հետ կապված իր պարտականություններն Ընկերության նկատմամբ, եթե Ընկերությունը չձեռնարկի այնպիսի գործողություններ, ինչպիսին գրավի իրացումն է (վերջինիս առկայության դեպքում), կամ
- ֆինանսական ակտիվն ավելի քան 120 օր ժամկետանց է:

Ակնկալվող պարտքային կորուստներն ճանաչվում է երկու փուլով: Ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներն այն ակնկալվող պարտքային կորուստներն են, որոնք առաջանում են բոլոր հնարավոր պարտազանցման դեպքերից ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի ընթացքում: 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստների գումարն ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների մի մասն է, որն իրենից ներկայացնում է այն ակնկալվող պարտքային կորուստները, որոնք առաջանում են ֆինանսական գործիքի գծով հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում հնարավոր պարտազանցման դեպքերից (կամ ավելի կարճ ժամկետում, եթե գործիքի ակնկալվող ամբողջ ժամկետը պակաս է 12 ամսից):

Առավելագույն ժամկետը, որը դիտարկվում է ակնկալվող պարտքային կորուստները չափելիս, պայմանագրի առավելագույն ժամկետն է, որի ընթացքում կազմակերպությունը ենթարկված է պարտքային ռիսկին:

Ակնկալվող պարտքային կորուստների չափում

Ակնկալվող պարտքային կորուստներն իրենցից ներկայացնում են պարտքային կորուստների հավանականությամբ կշռված պարտքային կորուստների գնահատականը: Պարտքային կորուստները չափվում են որպես բոլոր դրամական պակասուրդների ներկա արժեք (պայմանագրին համապատասխան Ընկերությանը հասանելիք դրամական հոսքերի և Ընկերության կողմից ակնկալվող ստացվելիք դրամական հոսքերի միջև տարբերությունը):

Ակնկալվող պարտքային կորուստները զեղչվում են ֆինանսական ակտիվի արդյունավետ տոկոսադրույքով:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն (շարունակելի)

(թ) Արժեզրկում (շարունակելի)

Պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը գնահատում է ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները պարտքային առումով արժեզրկված լինելու տեսանկյունից: Ֆինանսական ակտիվը պարտքային առումով արժեզրկված է, երբ տեղի են ունեցել մեկ կամ մի քանի դեպքեր, որոնք բացասական ազդեցություն ունեն այդ ֆինանսական ակտիվի գնահատված ապագա դրամական հոսքերի վրա:

Ֆինանսական ակտիվի պարտքային առումով արժեզրկված լինելու ապացույցներից են հետևյալ դեպքերի վերաբերյալ դիտելի տվյալները.

- փոխառուի կամ թողարկողի նշանակալի ֆինանսական դժվարությունները,
- պայմանագրի խախտումը, ինչպիսին է՝ պարտազանցումը կամ ավելի քան 90 օր ժամկետանց դառնալը,
- Ընկերության կողմից փոխառության կամ փոխատվության պայմանների այնպիսի վերանայումը, որն Ընկերությունը այլ պայմաններում չէր դիտարկի,
- հավանականությունը, որ փոխառուն կսնկանա կամ այլ կերպ ֆինանսապես կվերակազմակերպվի:

Ակնկալվող պարտքային կորուստների ներկայացումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով կորստի պահուստը նվազեցվում է այդ ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից:

Դուրսգրում

Ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը դուրս է գրվում, երբ Ընկերությունը չունի ֆինանսական ակտիվն ամբողջությամբ կամ դրա մի մասը փոխհատուցելու հիմնավոր ակնկալիք: Ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդների համար Ընկերությունը կիրառում է համախառն հաշվեկշռային արժեքը դուրս գրելու քաղաքականություն ֆինանսական ակտիվի ավելի քան 365 օր ժամկետանց լինելու դեպքում՝ հիմք ընդունելով նմանատիպ ակտիվների գծով գումարների փոխհատուցման անցյալ ժամանակաշրջանների փորձը: Իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդների համար Ընկերությունն իրականացնում է դուրսգրման ժամկետների և գումարի առանձին գնահատում՝ ելնելով փոխհատուցման ողջամիտ ակնկալիքներից: Ընկերությունը չի ակնկալում դուրսգրված գումարների էական փոխհատուցում: Այնուամենայնիվ, դուրսգրված ֆինանսական ակտիվները կարող են դեռևս հանդիսանալ կատարողական գործողությունների առարկա՝ հասանելի գումարների փոխհատուցման հետ կապված Ընկերության ընթացակարգերի հետ համապատասխանությունն ապահովելու համար:

(ii) Ոչ ֆինանսական ակտիվներ

Ընկերության ոչ ֆինանսական ակտիվների, բացառությամբ պաշարների և հետաձգված հարկային ակտիվների, հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ որոշելու համար, թե արդյոք առկա է որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված համարվել: Եթե որևէ այդպիսի հայտանիշ առկա է, ապա գնահատվում են ակտիվի փոխհատուցվող գումարը:

Արժեզրկման ստուգման նպատակով ակտիվները, որոնց արժեզրկումը հնարավոր չէ գնահատել անհատական հիմունքով, խմբավորվում են ակտիվների փոքրագույն խմբերի, որոնք շարունակական օգտագործման արդյունքում առաջացնում են այլ ակտիվներից կամ ակտիվների խմբերից կամ դրամաստեղծ միավորից մեծապես անկախ դրամական միջոցների ներհոսքեր:

Ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը որոշվում է որպես հետևյալ երկու մեծություններից առավելագույնը. օգտագործման արժեք և իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսումները: Օգտագործման արժեքը գնահատելիս գնահատված ապագա դրամական հոսքերը զեղչվում են մինչև իրենց ներկա արժեքը՝ օգտագործելով զեղչման մինչև հարկումը դրույքը, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատումները և ակտիվին կամ դրամաստեղծ միավորին հատուկ ռիսկերը:

Արժեզրկումից կորուստ ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է գնահատված փոխհատուցվող գումարը:

Արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում: Դրամաստեղծ միավորի (միավորների խմբի) ակտիվների հաշվեկշռային արժեքը նվազեցնելու նպատակով արժեզրկումից կորուստը բաշխվում է համամասնորեն:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն (շարունակելի)

(թ) Արժեզրկում (շարունակելի)

Նախորդ ժամանակաշրջաններում ճանաչված արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ բացահայտելու համար, թե առկա է արդյոք որևէ հայտանիշ, ըստ որի արժեզրկումից կորուստը հնարավոր է, որ այլևս գոյություն չունի կամ նվազել է: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է, եթե տեղի են ունեցել փոփոխություններ փոխհատուցվող գումարը որոշելիս օգտագործված գնահատականներում: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որքանով ակտիվի հաշվեկշռային արժեքը չի գերազանցում այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ (առանց համապատասխան մաշվածության կամ ամորտիզացիայի), եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

(ժ) Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Ընկերությունը՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, ներկա պահին ունի իրավական կամ կառուցողական պարտականություն, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Պահուստները որոշվում են զեղչելով ակնկալվող ապագա դրամական հոսքերը զեղչման մինչև հարկումը դրույքով, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատումները և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերը: Զեղչի գծով ծախսը ճանաչվում է որպես ֆինանսական ծախս: Ընկերությունը չօգտագործված արձակուրդի համար հատուցման գծով ճանաչում է պահուստ:

(ի) Վարձակալություն

Պայմանագրի սկզբում Ընկերությունը գնահատում է, արդյոք պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն: Պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն, եթե այդ պայմանագրով հատուցման դիմաց՝ որպես փոխանակում որոշակի ժամանակահատվածի ընթացքում փոխանցվում է որոշակիացված ակտիվի օգտագործման հսկողության իրավունքը:

Ընկերությունը՝ որպես վարձակալ

Վարձակալության սահմանմանը համապատասխանող վարձակալություն պարունակող պայմանագրեր չկան:

4. Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Ստորև ներկայացված են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների ստորագրման ամսաթվի դրությամբ հաստատված, սակայն ուժի մեջ դեռ չմտած նոր ստանդարտները և ստանդարտներում փոփոխությունները: Ընկերությունը մտադիր է կիրառել այս նոր կամ փոփոխված ստանդարտները, եթե կիրառելի են, նրանց՝ ուժի մեջ մտնելու պահից:

Անբարենպաստ պայմանագրեր. Պայմանագրի կատարման ծախսումներ. ՀՀՄՍ 37 փոփոխություններ

2020թ. մայիսի փոփոխությունները հստակեցնում են, թե որ ծախսումներն է Ընկերությունը ներառում պայմանագրի անբարենպաստ լինելը գնահատելու համար պայմանագրի կատարման ծախսումները որոշելիս: Փոփոխություններում կիրառվում է «ուղղակիորեն վերագրելի ծախսումների սկզբունքը»: Ապրանք/ծառայություններ տրամադրելու մասին պայմանագրին ուղղակիորեն վերագրելի ծախսումներն ընդգրկում են և՝ լրացուցիչ ծախսեր և՝ պայմանագրով նախատեսված գործողություններին ուղղակիորեն վերագրելի ծախսերի բաշխում: Ընդհանուր և վարչական ծախսերը պայմանագրին ուղղակիորեն վերագրելի չեն և չեն ընդգրկվում ուղղակիորեն վերագրելի ծախսումների մեջ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ պայմանագրի մյուս կողմին վերագրումը հստակորեն ամրագրված է պայմանագրով: Փոփոխությունները գործում են 2022թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար՝ փոփոխություններն առաջին անգամ կիրառելու ամսաթվի դրությամբ առկա պայմանագրերի համար: Սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ փոփոխությունների կիրառման կուտակային հետևանքը ճանաչվում է որպես չբաշխված շահույթի կամ սեփական կապիտալի այլ բաղադրիչների սկզբնական մնացորդի ճշգրտում՝ ըստ կիրառելիության: Համադրելի տեղեկատվությունը չի վերահաշվարկվում:

4. Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ (շարունակելի)

ՀՀՄՍ 1 ստանդարտում փոփոխություններ՝ Պարտավորությունների դասակարգում՝ որպես ընթացիկի և ոչ ընթացիկի

2020 թվականի հունվարին, ՀՀՄՍ Խորհուրդը հաստատել է ՀՀՄՍ 1 ստանդարտի պարագրաֆներ 69-ից 76-ում փոփոխությունները՝ հստակեցնելով պարտավորությունները ընթացիկ կամ ոչ ընթացիկ դասակարգելու պահանջները: Փոփոխությունը հստակեցնում է.

- Ի՞նչ է նշանակում վճարումը հետաձգելու իրավունք,
- Որ տարկետման իրավունքը պետք է գոյություն ունենա հաշվետու ժամանակաշրջանի վերջում,
- Որ դասակարգման վրա չի ազդում այն հավանականությունը, որ կազմակերպությունը կկիրառի իր տարկետման իրավունքը,
- Որ միայն այն դեպքում, եթե փոխարկելի պարտավորության մեջ ներկառուցված ածանցյալ գործիքն ինքնին բաժնային գործիք է, պարտավորության պայմանները չեն ազդի դրա դասակարգման վրա:

Փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2023թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար և պետք է կիրառվեն հետադարձ: Ընկերությունը ներկայումս գնահատում է այն ազդեցությունը, որ փոփոխությունները կունենան ընթացիկ պրակտիկայի վրա:

Հիմնական միջոցներից մուտքեր նախքան նախանշած նպատակով օգտագործելը – ՀՀՄՍ 16-ի փոփոխություններ

2020թ. մայիսին ՀՀՄՍԽ-ն հրապարակել է Փոփոխություններ ՀՀՄՍ 16-ում՝ *«Հիմնական միջոցներից մուտքեր նախքան նախանշած նպատակով օգտագործելը»*, որի համաձայն ընկերություններին չի թույլատրվում Հիմնական միջոցների արժեքից նվազեցնել ակտիվը համապատասխան վայր և ղեկավարության նախանշած նպատակներով օգտագործման համար վիճակի բերելու ընթացքում արտադրված միավորների վաճառքից ստացված մուտքերը: Ընկերությունը վաճառքից ստացված մուտքերն ու արտադրության ծախսերը պետք է ճանաչի Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության մեջ:

Փոփոխությունն ուժի մեջ է մտնում 2022թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Այն պիտի կիրառվի հետադարձ այն հիմնական միջոցների նկատմամբ, որ պատրաստ են եղել հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում ներկայացված ամենավաղ ժամանակաշրջանի սկզբում կամ դրանից հետո, այն դեպքում, երբ կազմակերպությունը առաջին անգամ է կիրառում այս փոփոխությունը:

Չի ակնկալվում, որ փոփոխությունները էական ազդեցություն կունենան Ընկերության վրա:

Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտում – Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում և ՖՀՄՍ Գործնական ցուցումներ 2-ում

2021թ. փետրվարին ՀՀՄՍԽ-ն թողարկել է փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում և *«Էականության դատողությունների կատարում»* ՖՀՄՍ Գործնական Ցուցումներ 2-ում, որտեղ ներկայացնում են ուղեցույցներ և օրինակներ՝ օգնելու կազմակերպություններին կիրառել հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտումների վերաբերյալ էականության դատողություններ: Փոփոխությունների նպատակն է օգնել կազմակերպություններին ներկայացնել հաշվապահական հաշվառման քաղաքականության առավել օգտակար բացահայտումներ՝ հաշվապահական հաշվառման «նշանակալի» քաղաքականությունների բացահայտման պահանջը փոխարինելով հաշվապահական հաշվառման «էական» քաղաքականությունների բացահայտման պահանջով, և ավելացնելով ուղեցույց, թե կազմակերպություններն ինչպես պետք է կիրառեն էականության սկզբունքը հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտման վերաբերյալ որոշումներ կայացնելիս:

ՀՀՄՍ 1-ի փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2023թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար՝ թույլատրելով վաղաժամկետ կիրառումը: Քանի որ Գործնական Ցուցումներ 2-ի փոփոխությունները հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղեկատվության էականության սահմանման կիրառման ոչ պարտադիր ուղեցույցներ են, այս փոփոխությունների համար ուժի մեջ մտնելու ամսաթվի սահմանման անհրաժեշտություն չկա:

Ընկերությունը շարունակում է գնահատել փոփոխությունների ազդեցությունը Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտումների վրա:

Ֆինանսական հաշվետվությունների հայեցակարգային հիմունքներին հղումներ – ՖՀՄՍ 3-ի փոփոխություններ

2020թ. մայիսին ՀՀՄՍԽ-ն թողարկել է փոփոխություններ ՖՀՄՍ 3-ում *«Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ»* – Ֆինանսական հաշվետվությունների հայեցակարգային հիմունքներին հղումներ: Փոփոխությունների նպատակն է 1989թ. թողարկված *«Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքներին»* հղումը փոխարինել 2018թ. մարտին թողարկված *«Ֆինանսական հաշվետվությունների հայեցակարգային հիմունքներին»* հղումով՝ առանց պահանջների նշանակալի փոփոխության:

4. Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ (շարունակելի)

Ֆինանսական հաշվետվությունների հայեցակարգային հիմունքներին հղումներ – ՖՀՄՍ 3-ի փոփոխություններ (շարունակելի)

Խորհուրդը նաև ավելացրել է ՖՀՄՍ 3-ի ճանաչման սկզբունքների բացառություն՝ պարտավորությունների և պայմանական պարտավորությունների գծով առաջացող հնարավոր «2-րդ օրվա» օգուտներից կամ վնասներից խուսափելու նպատակով, որոնք կգտնվեին ՀՀՄՍ 37-ի կամ ՖՀՄՄԽ 21 *«Պարտադիր վճարներ»*-ի շրջանակներում, եթե ճանաչվեին առանձին:

Միաժամանակ Խորհուրդը որոշել է պարզաբանել ՖՀՄՍ 3-ի պայմանական ակտիվների համար առկա ուղեցույցները, որոնց վրա *«Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքներին»* հղման փոխարինումը ազդեցություն չի ունենա:

Փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2022թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար և կիրառվում առաջընթաց: Չի ակնկալվում, որ փոփոխությունները էական ազդեցություն կունենան Ընկերության վրա:

5. Հասույթ

Հասույթի ուղղություններ

հազ. դրամ	*2021թ.*	*2020թ.*
Հասույթ ալյումինե փայլաթիթեղի վաճառքից	59,246,684	46,599,773
Այլ	5,635	5,537
	59,252,319	**46,605,310**

Հաճախորդների պայմանագրերից հասույթի մանրամասնեցում

Ստորև բերվող աղյուսակում հաճախորդների հետ պայմանագրերից հասույթը ներկայացված է ըստ հիմնական աշխարհագրական տարածաշրջանների շուկաների և հասույթի ճանաչման ժամկետների:

Դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար *հազ. դրամ*	*2021թ.*	*2020թ.*
Հիմնական շուկաներն ըստ աշխարհագրական տարածաշրջանների		
Եվրոպական երկրներ	50,871,781	30,632,069
ԱՄՆ	7,265,385	15,904,718
Ասիա	972,356	–
ԱՊՀ երկրներ	142,797	68,523
Հասույթի ճանաչման ժամկետներ	**59,252,319**	**46,605,310**
Ժամանակի որոշակի պահին փոխանցված ապրանքներ	59,252,319	46,605,310
Հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից	**59,252,319**	**46,605,310**

Կատարման պարտականություններ և հասույթի ճանաչման քաղաքականություն

Հասույթը չափվում է հաճախորդի հետ պայմանագրում սահմանված հատուցման հիման վրա: Ընկերությունը ճանաչում է հասույթը, երբ հաճախորդին է փոխանցում ապրանքի կամ ծառայության նկատմամբ հսկողությունը:

5. Հասույթ (շարունակելի)

Կատարման պարտականություններ և հասույթի ճանաչման քաղաքականություն (շարունակելի)

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդների հետ պայմանագրերի կատարման պարտականությունների բնույթի և կատարման ժամկետների, այդ թվում՝ վճարման նշանակալի պայմանների և հասույթի ճանաչման համապատասխան քաղաքականության վերաբերյալ:

Ապրանքի/ծառայության տեսակը	*Կատարման պարտականությունների բնույթը և կատարման ժամկետները, ներառյալ՝ վճարման նշանակալի պայմանները*	*Հասույթի ճանաչման քաղաքականություն*
Ապրանքների վաճառք	Այս պայմանագրերն իրենցից ներկայացնում են ալյումինե փայլաթիթեղի վաճառքի պայմանագրեր: Պատվիրատուն հսկողության իրավունք է ստանում մատակարարվող ապրանքների նկատմամբ ապրանքները տրամադրելու պահին, երբ ռիսկերը փոխանցվում են պայմանագրում նշված Միջազգային առևտրային տերմինների (Incoterms) պայմանների համաձայն: Հաշիվները դուրս են գրվում և հասույթը ճանաչվում է ժամանակի որոշակի պահին:	ՖՀՄՍ 15-ի համաձայն՝ հասույթը ճանաչվում է, երբ պատվիրատուն հսկողության իրավունք է ստանում ապրանքների նկատմամբ: ՖՀՄՍ 15-ի պահանջները նշանակալի ազդեցություն չեն ունեցել հասույթի ճանաչման նկատմամբ Ընկերության կողմից կիրառվող մոտեցման և հասույթի ճանաչման ժամկետների վրա:

6. Վաճառքի ինքնարժեք

հազ. դրամ	*2021թ.*	*2020թ.*
Նյութեր	43,492,362	35,866,882
էլեկտրաէներգիա	3,999,855	3,816,787
Աշխատավարձ	2,578,036	2,499,442
Մաշվածություն	1,394,542	927,212
Այլ ծախսեր	541,709	431,477
	52,006,504	**43,541,800**

7. Իրացման ծախսեր

հազ. դրամ	*2021թ.*	*2020թ.*
Փոխադրման ծախսեր*	425,358	291,518
Աշխատավարձ	34,435	34,204
Օգտագործված նյութեր	31,181	27,424
Մաքսային տուրքեր	24,782	24,192
Արտադրանքի սերտիֆիկացման ծախսեր	2,725	3,175
Այլ	27,447	26,225
	545,928	**406,738**

* Փոխադրման ծախսերը կախված են վաճառքի պայմանագրի ինկոտերմսից: Ընկերությունը հիմնականում օգտագործում է DAP և FCA ինկոտերմսը:

8. Վարչական ծախսեր

հազ. դրամ	*2021թ.*	*2020թ.*
Աշխատավարձ	1,126,442	1,047,248
Կոմունալ և կապի ծառայություններ	113,540	74,444
Սպասարկման ծախսեր	107,122	60,181
Գույքի ապահովագրություն	46,217	41,790
Մաշվածություն	38,898	29,774
Աուդիտորական և խորհրդատվական ծառայությունների վճարներ	25,572	24,374
Տեղեկատվական տեխնոլոգիաների ծրագրերի գծով ծախսեր	21,024	15,261
Ներկայացուցչական և գործուղումների ծախսեր	15,629	4,906
Բանկային ծառայությունների վճարներ	13,022	9,622
Այլ	299,002	343,977
	1,806,468	**1,651,577**

2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար անձնակազմի գծով ընդհանուր ծախսերը կազմել են 3,731,228 հազար դրամ (2020թ.-ին՝ 3,622,760 հազար դրամ):

9. Զուտ ֆինանսական եկամուտ/(ծախսեր)

հազ. դրամ	*2021թ.*	*2020թ.*
Շահույթում կամ վնասում ճանաչված		
Տոկոսային եկամուտ բանկային ավանդների գծով	7	11
Զուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից	1,233,931	–
Ընդամենը ֆինանսական եկամուտ	**1,233,938**	**11**
Տոկոսային ծախս բանկային երաշխավորությունների գծով	(2)	(617)
Զուտ վնաս փոխարժեքային տարբերություններից	–	(2,138,820)
Ընդամենը ֆինանսական ծախսեր	**(2)**	**(2,139,437)**
Շահույթում կամ վնասում ճանաչված զուտ ֆինանսական եկամուտ/(ծախսեր)	**1,233,936**	**(2,139,426)**

10. Շահութահարկի գծով ծախս

Շահույթում կամ վնասում ճանաչված գումարներ

Ընկերությունը շահութահարկը վճարում է 18% դրույքաչափով (2020թ-ին՝ 18%).

հազ. դրամ	*2021թ.*	*2020թ.*
Ընթացիկ շահութահարկի գծով ծախս		
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն	(808,189)	–
Հետաձգված հարկի գծով օգուտ		
Ժամանակավոր տարբերությունների առաջացում և հակադարձում	(97,589)	52,081
Ընդամենը օգուտ շահութահարկի գծով	**(905,778)**	**52,081**

10. Շահութահարկի գծով ծախս (շարունակելի)

Շահույթում կամ վնասում ճանաչված գումարներ (շարունակելի)

Շահութահարկի արդյունավետ դրույքաչափը տարբերվում է շահութահարկի՝ օրենքով սահմանված դրույքաչափից: Օրենքով սահմանված դրույքաչափի հիման վրա շահութահարկի գծով ծախսի համաձայնեցումը իրականի հետ հետևյալն է.

	2021թ.		*2020թ.*	
	հազ. դրամ	*%*	*հազ. դրամ*	*%*
Շահույթ/(ծախս) նախքան շահութահարկով հարկումը	**5,753,359**	**100**	**(1,314,694)**	**100**
Շահութահարկ՝ հաշվարկված հարկի կիրառելի դրույքաչափով	**(1,035,605)**	**18**	**236,645**	**18**
Ճանաչված նվազեցվող ժամանակավոր տարբերությունների փոփոխություն (հետաձգված հարկային ակտիվների նվազեցման կամ հակադարձման արդյունքում)	–	–	–	–
Ընթացիկ տարվա վնասը, որի համար հետաձգված հարկային ակտիվ չի ճանաչվել	–	–	–	–
Նախորդ ժամանակաշրջանում չճանաչված շահութահարկի գծով կորուստների ճանաչում	–	–	93,223	(7)
Հարկային վնասին վերաբերող նախկինում չճանաչված հետաձգված հարկերի ճանաչում	–	–	141,903	(11)
Զուտ չնվազեցվող եկամուտ / (զուտ չնվազեցվող ծախսեր)	129,827	(2)	(419,690)	32
	(905,778)	**16**	**52,081**	**4**

Ճանաչված հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները վերագրելի են հետևյալ հոդվածներին՝

	Ակտիվներ		*Պարտավորություններ*		*Զուտ*	
հազ. դրամ	*2021թ.*	*2020թ.*	*2021թ.*	*2020թ.*	*2021թ.*	*2020թ.*
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	–	–	(2,942,753)	(2,952,588)	**(2,942,753)**	**(2,952,588)**
Պաշարներ	–	–	(397,160)	(363,279)	**(397,160)**	**(363,279)**
Հաջորդ ժամանակաշրջան փոխանցված հարկային վնաս	–	93,223	–	–	**–**	**93,223**
Պահուստներ	19,680	–	–	–	**19,680**	**–**
Հարկային ակտիվներ/ (պարտավորություններ)	**19,680**	**93,223**	**(3,339,913)**	**(3,315,867)**	**(3,320,233)**	**(3,222,644)**

Հետաձգված հարկի մնացորդների փոփոխությունները տարվա ընթացքում

հազ. դրամ	*1 հունվարի 2021թ.*	*Շահույթում կամ վնասում ճանաչված*	*31 դեկտեմբերի 2021թ.*
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	(2,952,588)	9,835	(2,942,753)
Պաշարներ	(363,279)	(33,881)	(397,160)
Հաջորդ ժամանակաշրջան փոխանցված հարկային վնաս	93,223	(93,223)	–
Պահուստներ	–	19,680	19,680
	(3,222,644)	**(97,589)**	**(3,320,233)**

հազ. դրամ	*1 հունվարի 2020թ.*	*Շահույթում կամ վնասում ճանաչված*	*31 դեկտեմբերի 2020թ.*
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	(2,944,262)	(8,326)	(2,952,588)
Պաշարներ	(330,463)	(32,816)	(363,279)
Հաջորդ ժամանակաշրջան փոխանցված հարկային վնաս	**–**	93,223	93,223
	(3,274,725)	**52,081**	**(3,222,644)**

11. Հիմնական միջոցներ

հազ. դրամ	*Հողատարածք և շենքեր*	*Անավարտ շինարարություն*	*Մեքենա սարքավորումներ*	*Փոխադրամիջոցներ*	*Տնտեսական միջոցներ*	*Ընդամենը*
Սկզբնական արժեք						
Մնացորդը առ 1 հունվարի 2020թ.	**3,984,967**	**184,601**	**35,445,200**	**395,017**	**385,784**	**40,395,569**
Ավելացումներ	9,600	1,950,264	199,791	108,949	57,212	**2,325,816**
Օտարումներ/դուրսգրումներ	(30,320)	–	(153,591)	(8,679)	(8,341)	**(200,931)**
Տեղափոխումներ	1,902,193	(2,105,242)	203,049	–	–	**–**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	**5,866,440**	**29,623**	**35,694,449**	**495,287**	**434,655**	**42,520,454**
Մնացորդը առ 1 հունվարի 2021թ. մինչև հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ փոփոխությունները	**5,866,440**	**29,623**	**35,694,449**	**495,287**	**434,655**	**42,520,454**
Հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ փոփոխությունները	–	–	3,330,420	–	–	**3,330,420**
Մնացորդը առ 1 հունվարի 2021թ. հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ փոփոխություններից հետո	**5,866,440**	**29,623**	**39,024,869**	**495,287**	**434,655**	**45,850,874**
Ավելացումներ	–	274,443	1,082,809	17,672	30,956	**1,405,880**
Օտարումներ/դուրսգրումներ	(2,190)	–	(361,075)	–	(11,514)	**(374,779)**
Արժեզրկում	(80,017)	–	(52,321)	–	–	**(132,338)**
Տեղափոխումներ	37,461	(251,996)	214,252	283	–	**–**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	**5,821,694**	**52,070**	**39,908,534**	**513,242**	**454,097**	**46,749,637**
Մաշվածություն						
Մնացորդը առ 1 հունվարի 2020թ.	**1,080,276**	**–**	**12,606,892**	**246,378**	**308,202**	**14,241,748**
Տարվա մաշվածություն	64,050	–	846,725	40,863	23,320	**974,958**
Օտարումներ/դուրսգրումներ	(2,063)	–	(115,002)	(8,656)	(7,484)	**(133,205)**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	**1,142,263**	**–**	**13,338,615**	**278,585**	**324,038**	**15,083,501**
Մնացորդը առ 1 հունվարի 2021թ. մինչև հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ փոփոխությունները	**1,142,263**	**–**	**13,338,615**	**278,585**	**324,038**	**15,083,501**
Հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ փոփոխությունները	–	–	1,389,151	–	–	**1,389,151**
Մնացորդը առ 1 հունվարի 2021թ. հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ փոփոխություններից հետո	**1,142,263**	**–**	**14,727,766**	**278,585**	**324,038**	**16,472,652**
Տարվա մաշվածություն	64,468	–	1,334,345	46,706	43,075	**1,488,594**
Օտարումներ/դուրսգրումներ	(577)	–	(306,467)	–	(11,451)	**(318,495)**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	**1,206,154**	**–**	**15,755,644**	**325,291**	**355,662**	**17,642,751**
Հաշվեկշռային արժեք						
Առ 1 հունվարի 2020թ.	**2,904,691**	**184,601**	**22,838,308**	**148,639**	**77,582**	**26,153,821**
Առ 31 դեկտեմբերի 2020թ.	**4,724,177**	**29,623**	**22,355,834**	**216,702**	**110,617**	**27,436,953**
Առ 31 դեկտեմբերի 2021թ.	**4,615,540**	**52,070**	**24,152,890**	**187,951**	**98,435**	**29,106,886**

1,394,542 հազար դրամ գումարով մաշվածությունը (2020թ-ին՝ 927,212 հազար դրամ) գրանցվել է վաճառքի ինքնարժեքի կազմում, 43,313 հազար դրամ գումարով մաշվածությունը (2020թ-ին՝6,436) ներառվել է պաշարների տարեսկզբի մնացորդում, 38,898 հազար դրամ գումարով մաշվածությունը (2020թ-ին՝ 29,774 հազար դրամ) գրանցվել է վարչական ծախսերի կազմում, 5,155 հազար դրամ գումարով (2020թ-ին՝ 5,072 հազար դրամ)՝ իրացման ծախսերի կազմում և 6,686 հազար դրամ գումարով (2020թ-ին՝ 6,463 հազար դրամ)՝ այլ ծախսերի կազմում:

11. Հիմնական միջոցներ (շարունակելի)

2021թ. հունվարին սպասարկող սարքավորումների օգտակար ծառայությունը, գործնական նպատակներից ելնելով, վերագնահատվել է 13 ամսից մինչև 120 ամիս, քանի որ սպասարկող սարքավորումներն օգտավորվում են որպես սարքավորումների՝ պարբերաբար փոխարինվող մասեր, ինչը պահանջում է սպասարկող սարքավորումները ճանաչել որպես հիմնական միջոցների միավորներ՝ ճանաչման և հետագա չափման ժամանակ կիրառելով ՀՀՄՍ 16:

12. Պաշարներ

հազ. դրամ	*2021թ.*	*2020թ.*
Հումք և սպառողական նյութեր	6,237,583	10,262,045
Հումք և նյութեր ճանապարհին	8,186,168	3,981,108
Պատրաստի արտադրանք	1,839,960	1,730,173
Անավարտ արտադրություն	2,491,239	1,167,560
	18,754,950	**17,140,886**

13. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

հազ. Դրամ	*2021թ.*	*2020թ.*
Առևտրային դեբիտորական պարտքեր	5,804,516	5,211,437
Կանխավճարներ	755,814	348,699
Փոխհատուցելի ԱԱՀ և ակցիզային հարկ	414,016	331,207
Այլ ստացվելիք հարկեր	13,101	10,840
Այլ դեբիտորական պարտքեր	359	–
	6,987,806	**5,902,183**

Պարտքային և արժութային ռիսկերին Ընկերության ենթարկվածության վերաբերյալ տեղեկատվությունը և առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժեզրկումից կորուստները ներկայացված են Ծանոթագրություն 19-ում:

14. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

հազ. դրամ	*2021թ.*	*2020թ.*
Բանկային հաշիվների մնացորդներ	19,584	63,822
Դրամական միջոցները և դրանց համարժեքները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում և դրամական հոսքերի մասին հաշվետվությունում	**19,584**	**63,822**

Տոկոսադրույքի ռիսկին Ընկերության ենթարկվածության վերաբերյալ տեղեկատվությունը և ֆինանսական ակտիվների և պարտավորությունների զգայունության վերլուծությունը ներկայացված են Ծանոթագրություն 19-ում:

15. Կապիտալ և պահուստներ

Բաժնետիրական կապիտալ

	Սովորական բաժնետոմսեր	
Բաժնետոմսերի քանակը, եթե այլ տեղեկատվություն նշված չէ	*2021թ.*	*2020թ.*
Հունվարի 1-ի և դեկտեմբերի 31-ի դրությամբ թողարկված, ամբողջովին վճարված	36,699,295	36,699,295
Հայտարարված բաժնետոմսեր – 1,000 դրամ անվանական արժեք	36,699,295	36,699,295

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերը հավասար իրավունքներ ունեն Ընկերության մնացորդային ակտիվների նկատմամբ:

15. Կապիտալ և պահուստներ (շարունակելի)

Շահաբաժիններ

Հայաստանի Հանրապետության օրենդրության համաձայն՝ Ընկերության բաշխման ենթակա պահուստները սահմանափակվում են Ընկերության ՖՀՄՍ համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվություններում գրանցված չբաշխված շահույթի մնացորդով: 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չուներ բաշխման ենթակա պահուստներ (2020թ-ին նման պահուստներ չկային):

2021թ. և 2020թ. ընթացքում շահաբաժիններ չեն հայտարարել և չեն վճարել: 2020թ. դեկտեմբերի 31-ից հետո շահաբաժիններ չեն առաջարկվել:

Լրացուցիչ կապիտալ

12,081,539 հազար դրամ (2020թ-ին՝ 12,081,539 հազար դրամ) գումարով լրացուցիչ կապիտալն իրենից ներկայացնում է Բաժնետերերի խմբի ընկերություններից շուկայականից ցածր տոկոսադրույքով ստացված փոխառությունների՝ սկզբնական ճանաչման պահին կամ հետագման պահին իրական արժեքի և այդ փոխառությունների անվանական գումարների տարբերությունը:

16,602,294 հազար դրամ (2020թ-ին՝ 16,602,294 հազար դրամ) գումարով լրացուցիչ կապիտալն իրենից ներկայացնում է Ընկերության բաժնետիրոջից (Բաժնետերերի խմբի ընկերություն) անվճար ստացված մուրհակների իրական արժեքը:

16. Կապիտալի կառավարում

Ընկերությունը չունի կապիտալի կառավարումը կարգավորող ձևակերպված քաղաքականություն: Ընկերության նկատմամբ չեն կիրառվում արտաքին կանոնակարգող մարմինների պահանջներ կապիտալի հետ կապված:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության պարտավորությունների և սեփական կապիտալի հարաբերակցությունը կազմում էր՝

հազ. դրամ	*2021 թ.*	*2020 թ.*
Ընդամենը պարտավորություններ	42,860,084	43,883,578
Հանած՝ դրամական միջոցները և դրանց համարժեքները	(19,584)	(63,822)
Զուտ պարտքը	**42,840,500**	**43,819,756**
Ընդամենը սեփական կապիտալ	**12,905,778**	**8,058,197**
Պարտավորությունների և սեփական կապիտալի հարաբերակցությունը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**3.3**	**5.4**

Տարվա ընթացքում կապիտալի կառավարման նկատմամբ կիրառվող Ընկերության մոտեցումը չի փոխվել:

17. Վարկեր և փոխառություններ

Այս ծանոթագրությունում ներկայացված է տեղեկատվություն ամորտիզացված արժեքով չափվող Ընկերության ոչ տոկոսակիր վարկերի և փոխառությունների պայմանագրային պայմանների վերաբերյալ: Արժութային և իրացվելիության ռիսկերին Ընկերության ենթարկվածության վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 19-ում:

հազ. դրամ	*2021թ.*	*2020թ.*
Ընթացիկ պարտավորություններ		
Գրավով չապահովված փոխառություններ կապակցված կողմերից	15,311,076	17,523,712

2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կապակցված կողմերից ստացված գրավով չապահովված փոխառություններն արտահայտված են ԱՄՆ դոլարով և եվրոյով, տոկոսակիր չեն և ենթակա են մարման ըստ պահանջի՝ այդ մասին ծանուցում ստանալուց հետո երեսուն բանկային օրվա ընթացքում:

17. Վարկեր և փոխառություններ (շարունակելի)

Ֆինանսավորման գործունեությունից առաջացող պարտավորությունների համադրում

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է զուտ պարտավորությունների և ֆինանսավորման գործունեությունից առաջացող Ընկերության պարտավորությունների փոփոխությունների վերլուծությունը 2021թ. և 2020թ. համար: Այս պարտավորությունների տարրերը դրամական հոսքերի հաշվետվության մեջ ներկայացված են որպես ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքեր:

հազ. դրամ	*2021թ.*	*2020թ.*
Ֆինանսավորման գործունեությունից առաջացած պարտավորություններ առ 1 հունվարի	**17,523,712**	**15,214,548**
Փոփոխություններ ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի հետ կապված	–	–
Ընդամենը փոփոխություններ ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի հետ կապված	**17,523,712**	**15,214,547**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքներ	(2,212,636)	2,309,165
Ֆինանսավորման գործունեությունից առաջացող պարտավորություններ առ 31 դեկտեմբերի	**15,311,076**	**17,523,712**

18. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

հազ. դրամ	*2021 թ.*	*2020 թ.*
Ստացված կանխավճարներ	19,506,141	19,894,030
Առևտրային կրեդիտորական պարտքեր	4,395,193	3,024,304
Վճարվելիք հարկեր, բացառությամբ շահութահարկի	124,692	135,312
Այլ կրեդիտորական պարտքեր	202,749	83,576
	24,228,775	**23,137,222**

Ստացված կանխավճարների կազմում 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներառված 19,504,119 հազար դրամ գումարը (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 19,887,879 հազար դրամ) իրենից ներկայացնում է ապրանքների վաճառքի դիմաց կապակցված կողմից ստացված կանխավճարները:

Առևտրային կրեդիտորական պարտքերի կազմում 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներառված 3,361,536 հազար դրամ գումարը (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,689,936 հազար դրամ) իրենից ներկայացնում է ալյումինե ձուլակտորներ գնելու համար կապակցված կողմին վճարվելիք գումարը:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի հետ կապված արժութային և իրացվելիության ռիսկերին Ընկերության ենթարկվածության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 19-ում:

19. Իրական արժեք և ռիսկերի կառավարում

Ֆինանսական գործիքների իրական արժեք

Բոլոր ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գնահատված իրական արժեքները մոտավորապես համապատասխանում են վերջիններիս հաշվեկշռային արժեքներին:

Ֆինանսական ռիսկերի կառավարում

Ֆինանսական գործիքներն օգտագործելիս՝ Ընկերությունը ենթարկվում է հետևյալ ռիսկերին.

- պարտքային ռիսկ (Ծանոթագրություն 19(բ)(ii));
- իրացվելիության ռիսկ (Ծանոթագրություն 19(բ)(iii));
- շուկայական ռիսկ (Ծանոթագրություն 19(բ)(iv)).

Ռիսկերի կառավարման հիմունքներ

Մայր կազմակերպությունը պատասխանատու է Ընկերության ռիսկերի կառավարման համակարգի կազմակերպման և հսկողության համար:

19. Իրական արժեք և ռիսկերի կառավարում (շարունակելի)

Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակելի)

Ընկերության ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել և վերլուծել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Ընկերությունը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և հսկողության մեխանիզմներ, ինչպես նաև հսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը սահմանված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների և Ընկերության գործունեության փոփոխություններն արտացոլելու նպատակով: Դասընթացների և կառավարման ստանդարտների և ընթացակարգերի միջոցով Ընկերությունը նպատակ ունի ստեղծել հսկողության կանոնակարգված և գործող համակարգ, որտեղ բոլոր աշխատակիցները հստակ պատկերացում ունեն իրենց դերերի և պարտականությունների մասին:

Մայր կազմակերպությունը վերահսկում է Ընկերության ռիսկերի կառավարման քաղաքականության և ընթացակարգերի հետ համապատասխանությունը և ուսումնասիրում է ռիսկերի կառավարման մեխանիզմի համապատասխանությունն Ընկերության վրա ներազդող ռիսկերին:

Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական կորուստ կրելու ռիսկն է, երբ պատվիրատուն կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմը չի կատարում իր պայմանագրային պարտականությունները: Պարտքային ռիսկն առաջանում է հիմնականում պատվիրատուներից ստացվելիք դեբիտորական պարտքերի և ֆինանսական կազմակերպությունների հետ գործարքների մնացորդների գծով:

Ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը ներկայացնում է առավելագույն ենթարկվածությունը պարտքային ռիսկին:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Ընկերությունը չի կիրառում հատուկ վարկային քաղաքականություն իր պատվիրատուների համար, այնուամենայնիվ, Ընկերության հասույթի մոտ 99.76%-ը (2020թ-ին՝ 99.85%) վերագրելի է կապակցված կողմ հանդիսացող մեկ պատվիրատուի հետ իրականացվող վաճառքի գործարքներին, և Ընկերությունն էական վնասներ պատմականորեն չի կրել այդ գործարքներից: Թեև դեբիտորական պարտքերի հավաքագրման վրա կարող են ազդեցություն ունենալ տնտեսական գործոնները, ղեկավարությունը գտնում է, որ Ընկերությանը չի սպառնում էական վնաս կրելու ռիսկ:

Ընկերությունը չի պահանջում գրավ ֆինանսական ակտիվների դիմաց:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Բանկային հաշիվների մնացորդները հիմնականում պահվում են բարձր վարկանիշ ունեցող բանկերում, և Ընկերությունը չի ակնկալում, որ պայմանագրային կողմերից որևէ մեկը չի կատարի իր պարտականությունները:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Ընկերությունը կունենա դժվարություններ ֆինանսական պարտավորությունների հետ կապված իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվ տրամադրելով: Իրացվելիության ռիսկի կառավարման հարցում Ընկերության մոտեցումն է ապահովել, որքանով հնարավոր է, բավարար իրացվելիություն սովորական և արտասովոր պայմաններում պարտավորությունները սահմանված ժամկետներում կատարելու համար՝ առանց անընդունելի կորուստներ կրելու կամ Ընկերության հեղինակությունը վտանգելու:

Իր ֆինանսական պահանջները կառավարելու համար Ընկերությունն օգտագործում է կապակցված կողմերից ստացված փոխառությունները: Այս փոխառությունները գրավով ապահովված չեն և տոկոսակիր չեն:

19. Իրական արժեք և ռիսկերի կառավարում (շարունակելի)

Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակելի)

Ենթարկվածությունն իրացվելիության ռիսկին

Ստորև ներկայացված են ֆինանսական պարտավորությունների պայմանագրային մնացած մարման ժամկետները հաշվետու ամսաթվի դրությամբ: Չի ակնկալվում, որ մարման ժամկետների վերլուծությունում ներառված դրամական հոսքերը կարող են առաջանալ նշվածից նշանակալիորեն ավելի վաղ կամ նշանակալիորեն տարբեր գումարներով:

2021թ. հազ. դրամ	*Հաշվեկշռային արժեք*	*Պայմանագրային դրամական հոսքեր*	*Մինչև 2 ամիս*
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ			
Գրավով չապահովված փոխառություններ կապակցված կողմերից			
ԱՄՆ դոլարով	6,086,706	6,086,706	6,086,706
Եվրոյով	9,224,370	9,224,370	9,224,370
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	4,597,943	4,597,943	4,597,943
	19,909,019	**19,909,019**	**19,909,019**

2020թ. հազ. դրամ	*Հաշվեկշռային արժեք*	*Պայմանագրային դրամական հոսքեր*	*Մինչև 2 ամիս*
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ			
Գրավով չապահովված փոխառություններ կապակցված կողմերից			
ԱՄՆ դոլարով	6,624,842	6,624,842	6,624,842
Եվրոյով	10,898,870	10,898,870	10,898,870
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	3,107,880	3,107,880	3,107,880
	20,631,592	**20,631,592**	**20,631,592**

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ընթացիկ պարտավորությունները գերազանցում էին ընթացիկ ակտիվները 13,777,511 հազար դրամով (2020թ-ին՝ 17,554,043 հազար դրամով): Միջանկյալ մայր կազմակերպությունն իր մտադրություն է հայտնել Ընկերությանը տրամադրել ֆինանսական և այլ աջակցություն մոտ ապագայում:

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն Ընկերության եկամտի կամ ֆինանսական գործիքների արժեքի տատանման ռիսկն է շուկայական գների, օրինակ՝ արտարժույթի փոխարժեքների, տոկոսադրույքների և բաժնետոմսերի գների փոփոխությունների հետևանքով: Շուկայական ռիսկի կառավարման նպատակն է կառավարել և հսկել շուկայական ռիսկին ենթարկվածությունը և պահպանել այն ընդունելի սահմանաչափերում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Արժութային ռիսկ

Ընկերությունը ենթարկվում է արժութային ռիսկին այնքանով, որքանով Ընկերության ֆունկցիոնալ արժույթը չի համապատասխանում այն արժույթին, որով արտահայտված են վաճառքները, գնումները, փոխառությունները, դրամական միջոցներ և դրանց համարժեքներ: Այս գործարքները հիմնականում արտահայտված են ԱՄՆ դոլարով, եվրոյով և ռուսական ռուբլով:

Ընկերությունը չի հեջավորում իր ենթարկվածությունն արժութային ռիսկին:

19. Իրական արժեք և ռիսկերի կառավարում (շարունակելի)

Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակելի)

Ենթարկվածությունն արժութային ռիսկին

Ստորև ներկայացված է արժութային ռիսկին Ընկերության ենթարկվածությունն՝ ըստ անվանական գումարների:

հազ. դրամ	*ԱՄՆ դոլարով արտահայտված 2021թ.*	*Եվրոյով արտահայտված 2021թ.*	*ՌԴ ռուբլով արտահայտված 2021թ.*	*Այլ արժույթով արտահայտված 2021թ.*
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	992	14,868	1,658	–
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	370,655	5,433,265	–	–
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	(3,522,495)	(117,749)	(122,855)	(4,860)
Վարկեր և փոխառություններ	(6,086,706)	(9,224,370)	–	–
Համախառն ենթարկվածություն	**(9,237,554)**	**(3,893,986)**	**(121,197)**	**(4,860)**

հազ. դրամ	*ԱՄՆ դոլարով արտահայտված 2020թ.*	*Եվրոյով արտահայտված 2020թ.*	*ՌԴ ռուբլով արտահայտված 2020թ.*	*Այլ արժույթով արտահայտված 2020թ.*
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	363	13,679	2,982	–
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	–	5,197,137	13,624	–
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	(1,732,502)	(410,755)	(70,337)	(25,955)
Վարկեր և փոխառություններ	(6,624,842)	(10,898,870)	–	–
Համախառն ենթարկվածություն	**(8,356,981)**	**(6,098,809)**	**(53,731)**	**(25,955)**

Տարվա ընթացքում կիրառվել են հետևյալ էական արտարժույթների փոխարժեքները.

	Միջին փոխարժեք		*Սփոթ փոխարժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ*	
ՀՀ դրամով	*2021թ.*	*2020թ.*	*2021թ.*	*2020թ.*
1 ԱՄՆ դոլար	503.2	489.31	480.14	522.59
1 եվրո	595.18	559.30	542.61	641.11
1 ՌԴ ռուբլի	6.83	6.78	6.42	7.02

Զգայնության վերլուծություն

Ստորև ներկայացված դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի 10% աճը (նվազումը) հետևյալ արտարժույթների նկատմամբ ազդեցություն կունենար արտարժույթով արտահայտված ֆինանսական գործիքների չափման և շահույթի կամ վնասի վրա ստորև ներկայացված գումարների չափով: Վերլուծության ժամանակ ենթադրվում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ և հաշվի չի առնում կանխատեսվող վաճառքի և գնումների ազդեցությունը:

հազ. դրամ	*Աճ*	*Նվազում*
31 դեկտեմբերի 2021թ.		
ԱՄՆ դոլար (10% փոփոխություն)	923,755	(923,755)
Եվրո (10% փոփոխություն)	389,399	(389,399)
ՌԴ ռուբլի (10% փոփոխություն)	12,120	(12,120)
Այլ (10% փոփոխություն)	486	(486)
31 դեկտեմբերի 2020 թ.		
ԱՄՆ դոլար (10% փոփոխություն)	835,698	(835,698)
Եվրո (10% փոփոխություն)	609,881	(609,881)
ՌԴ ռուբլի (10% փոփոխություն)	5,373	(5,373)
Այլ (10% փոփոխություն)	2,596	(2,596)

19. Իրական արժեք և ռիսկերի կառավարում (շարունակելի)

Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակելի)

Տոկոսադրույքի ռիսկ

Ընկերությունը չի ենթարկվում իր դրամական միջոցների հոսքերի վրա շուկայում գերակայող տոկոսադրույքների տատանումների ազդեցությանը և չունի լողացող տոկոսադրույքով ակտիվներ և պարտավորություններ 2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Ղեկավարությունը չի կիրառում պաշտոնապես ձևակերպված քաղաքականություն տոկոսադրույքի ռիսկը կառավարելու համար, քանի որ գտնում է, որ այս ռիսկն էական ազդեցություն չունի Ընկերության գործունեության վրա:

Իրական արժեքի զգայունության վերլուծություն ֆիքսված դրույքով գործիքների համար

Ընկերությունը չի հաշվառում ֆիքսված դրույքով որևէ ֆինանսական գործիք որպես իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող կամ որպես վաճառքի համար մատչելի: Այդ իսկ պատճառով, հաշվետու ամսաթվի դրությամբ տոկոսադրույքների փոփոխություններն ազդեցություն չեն ունենա շահույթի կամ վնասի կամ սեփական կապիտալի վրա:

20. Պայմանական դեպքեր

Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Ընկերությունն ունի ապահովագրական ծածկույթ շենքերի և գործունեության ընդհատման գծով, սակայն Ընկերությունն ապահովագրված չէ երրորդ կողմերի նկատմամբ պարտավորություններից, որոնք կարող են առաջանալ Ընկերության տարածքում տեղի ունեցած պատահարների կամ վերջինիս գործունեության հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելու արդյունքում: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշ դեպքերը կամ պատահարները կարող են զգալի անբարենպաստ ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

Դատական վարույթներ

Ընկերությունը ներգրավված չէ այնպիսի խոշոր դատական վարույթներում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ վերջինիս գործունեության արդյունքների կամ ֆինանսական վիճակի վրա:

Շրջակա միջավայրի պահպանություն

Ղեկավարության կարծիքով Ընկերության գործունեությունը համապատասխանում է շրջակա միջավայրի պահպանությանը վերաբերող կառավարության պահանջներին, այդ իսկ պատճառով գտնում է, որ Ընկերությունը չունի էական պարտավորություններ շրջակա միջավայրի պահպանության հետ կապված:

Այնուամենայնիվ, շրջակա միջավայրի պահպանությունը կարգավորող օրենսդրությունը զարգացման փուլում է Հայաստանում, և օրենսդրության ու վերջինիս մեկնաբանությունների փոփոխությունները կարող են առաջացնել էական պարտավորություններ ապագայում:

Պայմանական հարկային պարտավորություններ

Հայաստանի հարկային համակարգը, լինելով համեմատաբար նոր, բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատական որոշումների հաճախակի փոփոխություններով, որոնք երբեմն հստակ չեն, հակասական են, ինչը ենթադրում է տարբեր մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են սահմանել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել այլ երկրների ռիսկերի համեմատ շատ ավելի մեծ ռիսկեր: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանաբար է ճանաչել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի կիրառելի հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատական որոշումների իր մեկնաբանությունների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

21. Հանձնառություններ

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ուներ 779,638 հազար դրամ գումարով կապիտալ հանձնառություններ (2020թ-ին՝ 713,562 հազար դրամ):

22. Գործարքներ կապակցված կողմերի հետ

Վերահսկողություն

Ընկերության անմիջական մայր կազմակերպությունն է «ՌՈՒՍԱԼ ԼԻՄԻԹԻԴ» ընկերությունը:

Ընկերության միջանկյալ մայր կազմակերպությունն է «Ռուսալ» միավորված ընկերությունը:

2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության վերջնական վերահսկող անձն է պրն. Օլեգ Դերիպասկան:

Գործարքներ ղեկավարության հետ

Ղեկավարության վարձատրությունը

Տարվա ընթացքում առանցքային ղեկավար անձնակազմը ստացել է ստորև ներկայացված վարձատրությունը, որը ներառված է վարչական ծախսերի կազմում (Ծանոթագրություն 8):

հազ. դրամ	*2021թ.*	*2020թ.*
Աշխատավարձ և պարգևավճարներ	302,171	310,307

Ընկերության գործարքներն այլ կապակցված կողմերի հետ

Ստորև ներկայացված են Ընկերության գործարքներն այլ կապակցված կողմերի հետ:

Հասույթ

հազ. դրամ	*Գործարքի գումարը 2021թ.*	*Գործարքի գումարը 2020թ.*	*Մնացորդը 2021թ.*	*Մնացորդը 2020թ.*
Ապրանքների վաճառք				
Մայր կազմակերպության այլ դուստր.				
«Ռուսալ Թրեյդինգ Ինթերնեշընալ» ՍՊԸ	59,109,522	46,536,786	(13,728,163)	(14,690,743)
«Միավորված ընկերություն Ռուսալ - առևտրի տուն»	55,341	–	–	–
«Ուրալսկայա Ֆոլգա» ԲԸ	–	13,624	–	13,624
	59,164,863	**46,550,410**	**(13,728,163)**	**(14,677,119)**

Ծախսեր

հազ. դրամ	*Գործարքի գումարը 2021թ.*	*Գործարքի գումարը 2020թ.*	*Մնացորդը 2021թ.*	*Մնացորդը 2020թ.*
Նյութերի գնում				
Մայր կազմակերպության այլ դուստր.				
«Միավորված ընկերություն Ռուսալ - առևտրի տուն»	(39,617,559)	(29,144,148)	(3,272,363)	(1,689,936)
«Ռուսալ Ռեսալ» ՍՊԸ	–	(1,034)	–	–
«Ռուսալ Թրեյդինգ Ինթերնեշընալ» ՍՊԸ	(8,687)	(206,671)	–	–
«Ուրալսկայա Ֆոլգա» ԲԸ	(121,267)	(16,343)	–	–
«Սիբինֆոսոֆտ» ՍՊԸ	(8,759)	(1,136)	–	–
«Կրասնոյարսկի ալյումինի գործարան» ԲԸ	(45,458)	(32,504)	–	–
«Ռուսալ Սայանալ» ԲԸ	(9,018)	–	–	–
«Ռուսալ Մենեջմենթ» ԲԸ	(10,488)	–	–	–
Այլ ծախսեր				
Մայր կազմակերպության այլ դուստր.				
«Սիբինֆոսոֆտ» ՍՊԸ	(13,813)	(8,083)	(7,691)	(2,814)
«Վրեմյա SS» ՍՊԸ	(3,631)	(3,446)	(830)	(327)
	(39,838,680)	**(29,413,365)**	**(3,280,884)**	**(1,693,077)**

Կապակցված կողմերի հետ գործարքների բոլոր մնացորդները ենթակա են մարման կամ օգտագործման հաշվետու ամսաթվից հետո երկու ամսվա ընթացքում: Մնացորդներից ոչ մեկը գրավով ապահովված չէ:

22. Գործարքներ կապակցված կողմերի հետ (շարունակելի)

Ընկերության գործարքներն այլ կապակցված կողմերի հետ (շարունակելի)

Վարկեր և փոխառություններ

հազ. դրամ	*Վարկի/ փոխառության գումարը 2021թ.*	*Վարկի/ փոխառության գումարը 2020թ.*	*Մնացորդը 2021թ.*	*Մնացորդը 2020թ.*
Ստացված վարկեր և փոխառություններ				
այլ դուստր կազմակերպություններ				
«Սի Չայկա Քորփորեյշընն»	–	–	(15,311,076)	(17,523,712)
	–	**–**	**(15,311,076)**	**(17,523,712)**

Մայր կազմակերպության այլ դուստր կազմակերպություններից ստացված փոխառությունները տոկոսակիր չեն և ենթակա են մարման ըստ պահանջի՝ այդ մասին ծանուցում ստանալուց երեսուն բանկային օրվա ընթացքում:

23. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած դեպքեր

Ուկրաինայում հատուկ ռազմական գործողության արդյունքում շատ առաջատար երկրներ և տնտեսական միություններ հայտարարել են Ռուսաստանի՝ ներառյալ ռուսական բանկերի, այլ կազմակերպությունների և անհատների դեմ տնտեսական խիստ պատժամիջոցների մասին: Գործողության սկզբից ի վեր տեղի է ունեցել արտարժույթի նկատմամբ ռուսական ռուբլու զգալի արժեզրկում, ինչպես նաև Ռուսաստանի արժեթղթերի շուկայի և այլ շուկաներում ցուցակված ռուսական ընկերությունների արժեքի զգալի անկում: Իրավիճակը դեռ զարգանում է, բայց արդեն իսկ հանգեցրել է հումանիտար ճգնաժամի և հսկայական տնտեսական կորուստների Ուկրաինայում, Ռուսաստանում և այլ երկրներում: Ուկրաինան և Ռուսաստանը Հայաստանի կարևոր առևտրային գործընկերներ են: Ակնկալվում է, որ պատերազմը բացասաբար կանդրադառնա Հայաստանի տնտեսության վրա: Ընկերության ղեկավարությունը մշտադիտարկում է տնտեսական իրավիճակը ներկա միջավայրում: Ընկերությունը Ուկրաինայում ընթացող ռազմական գործողությունը համարում է հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող չճշգրտող դեպք: